Այբ դպրոց

2020-2021
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՅԲ
դպրոց

ՏԱՐԻՆ՝ ԳՈՐԾԵՐՈՎ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ. ՄԻՋԱԿԱՅՐ ԵՎ ՄԱՐԴԻԿ

ԴՊՐՈՑԻ ԿՅԱՆՔԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

ԻՆՉՊԵՍ ԱՋԱԿՑԵԼ ԴՊՐՈՑԻՆ

5

10

13

29

51

72

76

84

85

ՏԱՌԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ

2020-2021 ուսումնական տարին «Այբ» դպրոցի համար 10-րդն էր: Տասնամյակն ու հոբելյանական տարին ամփոփելիս բոլորիս շնորհավորելով՝ ցանկանում ենք կանգ առնել կարեւոր կետերի վրա, օրինակ՝ շեշտել այն փաստը, որ շրջանավարտների քննական արդյունքները A-երի և A*-երի տեսանկյունից աննախադեպ էին: Արդյունքում մենք ունեցանք աշխարհի 50 լավագույն համալսարաններ ընդունվողների շատ բարձր ցուցանիշ:

Ուրախալի է նաև, որ դպրոցում կտրուկ աճեց օլիմպիական խմբակների մասնակից աշակերտների թիվը: Արդյունքում գրանցեցինք բազմաթիվ հաջողություններ առարկայական օլիմպիադաների մարզային ու հանրապետական փուլերում:

Կարևորում ենք նաև, որ շարունակում է ընդլայնվել «Այբ»-ի բարերարների համայնքը: Մեզ համար առանձնապես ուրախալի է, որ բարերարների շարքերը համալրվում են նաեւ «Այբ»-ի ծնողական համայնքի ներկայացուցիչներով: Մենք ծնողական համայնքի հետ համատեղ ենք առաջ գնում՝ իրագործելու «Այբ»-ի առաքելությունը: Ընդհանուր առաքելության կարևորության գիտակցության ու վստահության աճն անգնահատելի է: Սրա մասին վկայում է նաև այն փաստը, որ տարին աննախադեպ էր մեր աշակերտների՝ 1-ին դասարան ընդունվող քույր-եղբայրների քանակով:

Այս տարի ձեւավորվեց նաև «Այբ»-ի շրջանավարտների ակումբը որպես ինքնուրույն կառույց: Սա մեր առաքելության իրականացման և սերունդների փոխօգնության գաղափարի մարմնացումն է, ինչի կարևորությունն անկարող ենք չգերագնահատել:

Այնուամենայնիվ, շատ դժվար է ամփոփել 2020-2021 ուսումնական տարին: Տարին սովորական չէր աշխարհի և առավել ևս հայկական աշխարհի համար: Երբ ամբողջ աշխարհը պայքարում էր համավարակի դեմ, մենք Հայաստանում և Արցախում պայքարում էինք նաև մեր ազատության և ինքնության համար:

Այն աշխարհը, որը մենք գիտեինք, այլևս չկա: Հայտնվել ենք այլ իրականության մեջ, որն ամբողջ աշխարհի համար բազմաթիվ անորոշություններ բացեց: Կայունության գրեթե բոլոր կետերը, որոնք մենք գիտեինք ու որոնց շուրջ կառուցում էինք մեր պլանները, նպատակները, վերացան կամ կասկածի տակ դրվեցին:

Եվ եթե փորձենք մեկ բառով նկարագրել, 2020-2021-ն անորոշության տարի էր. գոյություն ունեցող կանոնները խախտվեցին, արժեքները կասկածի տակ դրվեցին:

Անորոշության ժամանակ դժվար է պլանավորել, հասկանալ՝ ուր ես ուզում գնալ: Պլանավորման հորիզոնը նեղանում է ու տարիների կտրվածքից գալիս է շատ մոտ՝ դառնալով այսօր: Դու չես կարող նույնիսկ վաղվա օրդ պլանավորել: Ու երբ ամեն ինչ քանդվում է, վերանում է կոորդինատային առանցքը, անհնար է պլանավորման ժամանակ գտնել հիմք՝ կայունության կետերը, որոնց վրա կկառուցես քո ծրագրերը:

Ցանկացած կազմակերպության համար նման իրավիճակում գործելը մարտահրավերային է: Եվ արժեքների կասկածի տակ դրվելու կամ վերանայման ժամանակաշրջանում կրկնակի դժվար է գաղափարական կառույցների զարգացումը կանխատեսել:

Մյուս կողմից էլ անորոշության միջավայրում գերկարեւոր է դառնում «Այբ»-ի եւ «Այբ»-ի նման՝ գաղափարական, առաքելություն ունեցող, արժեքների վրա հիմնված եւ արժեքներ դավանող կառույցների գոյությունը, որովհետեւ նրանք են դառնում կայունության կետեր: Երբ որ ֆիզիկականը, փորձվածը, շոշափելին դառնում է անշոշափելի ու վերացական, գաղափարները դառնում են կայունության կետեր: Ու նման կառույցների հիման վրա է սկսվում պլանավորումը: Դրանք են դառնում հիմք նոր զարգացումների, նոր տեսլականներ ձեւավորելու համար:

Այս տեսանկյունից տեղի է ունենում ոչ թե պլանավորման հորիզոնի կրճատում, այլ տասնամյակների ու հարյուրամյակների կտրվածքով ընդլայնում: Քանի որ այն, ինչ կատարվում է այսօր, քեզ համար դառնում է պատմության մեջ մի պահ, բայց «այսօրը» դառնում է քայլ դեպի ցանկալի հեռավոր, կայուն ապագան:

«Այբ»-ը հենց այսպիսի կառույց է: Եվ այս ժամանակաշրջանն անցնելով եւ այս իրավիճակում Է՛լ ավելի են կարեւորվում «Այբ»-ի դերն ու առաքելությունը, որոնք դարձել են Է՛լ ավելի արժեքավոր, տեսլականը՝ Է՛լ ավելի ձգող:

«Այբ»-ը դարձել է մի երեւույթ, որն արդեն ոչ միայն կրթական շարժում է, դպրոցական համայնք կամ պարզապես կյանքում կայանալու ճանապարհ, այլեւ պետականության, պետության, ազգապահպանման, հավերժության մեջ լինելության ու զարգացման ուղղություն: Այս գիտակցումը մեզ ստիպում է Է՛լ ավելի մեծ եռանդով, նվիրումով ու պատասխանատվությամբ մոտենալ «Այբ»-ի զարգացմանը եւ «Այբ»-ի համար ի սկզբանե հիմք ծառայած արժեքների պահպանմանն ու տարածմանը:

ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԵԼՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը վաղուց արդեն իր ուրույն տեղն ունի հայկական կրթական համակարգում: «Այբ»-ի սովորելու միջավայրը համապատասխանում է 21-րդ դարի ոգուն և պահանջներին: «Այբ»-ում ազգային հիմքի վրա մշակվում են եզակի կրթական տեխնոլոգիաներ և փորձարկվում ժամանակակից կրթության բարձրագույն ձեռքբերումները՝ նպաստելով հայկական կրթության մրցունակության մեծացմանը: «Այբ» դպրոցի նպատակն ու առաքելությունը ուսյալ, առաքինի, պատկանելության և պատասխանատվության զգացում ունեցող երիտասարդների սերունդներ ձևավորելն է:

«Այբ» դպրոցը նաև յուրօրինակ լաբորատորիա է՝ դասավանդման ու ուսումնառության լավագույն տեխնոլոգիաների ու մեթոդաբանության մշակման և կրթական համակարգերի ստեղծման համար:

«Այբ» դպրոցը բացվել է 2011 թվականին «Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ կրթության գաղափարի շուրջ միավորված հարյուրավոր բարերարների ֆինանսական աջակցությամբ: «Այբ» դպրոցը կարգավիճակով հիմնադրամ է (պաշտոնական անունը՝ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամ) և հասարակական կառույց: Դպրոցը ղեկավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից, չունի սեփականատերեր ու բաժնետերեր: «Այբ» ավագ դպրոցը ոչ պետական ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է Հայաստանում, և աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի ստանում է ուսման վարձի փոխհատուցում:

«Այբ» կրթական ավան

ԿՈՉՈՒՄՆԵՐ ԾԱՌԱՅԱԿՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը 12-ամյա է՝ տարրական (1-4-րդ դասարաններ), միջին (5-9-րդ դասարաններ) և ավագ (10-12-րդ դասարաններ) բաղադրիչներով: «Այբ»-ում դասավանդումը կատարվում է «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ) հայկական կրթական ծրագրով, որը մշակվել է «Այբ» կրթական հիմնադրամի կողմից:

ԱԲ-ը համաշխարհային մակարդակով մրցունակ ուսումնական ծրագիր է, որի շնորհիվ հայ երեխաները, սովորելով հայկական դպրոցներում, հայերենով, ստանում են միջազգային բոլոր խստապահանջ չափանիշներին համապատասխան որակյալ կրթություն: ԱԲ-ի ավարտական հավաստագիրն ընդունելի ու ճանաչելի է թե՛ տեղական, թե՛ միջազգային բուհերի կողմից:

2020-2021 ուսումնական տարում ԱԲ ծրագիրը ճանաչվեց և/կամ դիմորդները կրթությունը շարունակելու առաջարկ ստացան ևս 19 բուհի կողմից, և 2021 թ. օգոստոսի դրությամբ Արարատյան բակալավրիատ հավաստագիրը ճանաչվել և ընդունվել է 18 երկրի 113 բուհի կողմից:

Արարատյան բակալավրիատի փիլիսոփայությունը խարսխված է ութ սկզբունքների վրա, որոնք արտահայտում են ԱԲ-ի դպրոցների ինքնությունը և ապահովում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետություն, մարդկային փոխհարաբերությունների ներդաշնակություն, սովորելու առողջ միջավայր և համայնքաշինական արժեքների սերմանում:

Արարատյան բակալավրիատ

Ա. ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԲ-ն ամբողջական կրթության ծրագիր է: ԱԲ-ի նպատակը համակողմանի զարգացած, հոգեպես հարուստ և առողջ անհատների ձևավորումն է:

Բ. ԽՈՐԱՑՈՒՄ

ԱԲ-ն ընձեռում է յուրաքանչյուր առարկա խորությամբ ուսումնասիրելու հնարավորություն՝ առանց խախտելու կրթության համակողմանիության սկզբունքը:

Գ. ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: ԱԲ-ը ձևավորում է այնպիսի միջավայր, որում սովորողները ճանաչելով ստեղծում են և ստեղծելով ճանաչում՝ ներգրավվելով տարբեր առարկայական և միջառարկայական ծրագրերում:

Դ. ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՐՎԵՍՏ

ԱԲ-ի կրթական միջավայրն իր կրթական ռեսուրսներով, խորհրդատվական համակարգով, տեխնոլոգիական լուծումներով նպաստում և տրամադրում է աշխատանքի, ակտիվության և արդյունավետության:

Ե. ԱՐԺԵՔՆԵՐ

ԱԲ-ն արժեքներ գնահատող և սերմանող ծրագիր է: ԱԲ-ի նպատակն է՝ ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև բարոյապես մաքուր, սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի:

Զ. ՀԱՄԱՅՆՔ

ԱԲ-ը համայնքաշինական առաքելություն է: ԱԲ-ի ամենամեծ հարստություններից մեկը նրա շուրջ համախմբված մարդիկ են: ԱԲ-ը միավորում է կրթությամբ կայացած և կրթության մեջ ներդրում կատարելու ցանկություն ունեցող մարդկանց, ովքեր պատրաստ են նոր սերնդին կրթությամբ իրագործվելու հնարավորություն տալու պատասխանատվություն ստանձնելու:

Է. ՄԻՋԱՎԱՅՐ

Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: ԱԲ-ը ձևավորում է այնպիսի միջավայր, որում սովորողները ճանաչելով ստեղծում են և ստեղծելով ճանաչում՝ ներգրավվելով տարբեր առարկայական և միջառարկայական ծրագրերում:

Ը. ԳՆԱՀԱՏԱՆՔ

ԱԲ-ի դպրոցն արժևորման, հարգանքի և շնորհակալության միջավայր է:

ԻՄԱ ԵՒ ԱՐԱ

«Այբ» դպրոցի փիլիսոփայությունն ամփոփված է դպրոցի նշանաբանում՝ «Իմա եւ արա», գրաբարից թարգմանաբար՝ «Հասկացի՛ր և արա՛»: Այս երկու սկզբունքները խորապես փոխկապակցված են, այսինքն՝ չկա ճանաչողություն առանց իրագործման, ոչ էլ արարում՝ առանց իմացական ձեռքբերման: Այս երկուսի համադրությունը մեր կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է:

«ԱՅԲ» ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

	ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ	ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ	ՃՇԳՐԻՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ	Մայրենի խոսքի մշակույթ	Անգլերեն Ռուսերեն	Մաթեմատիկա Համակարգչային գիտություն	Գիտություն
ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ	Հայոց լեզու Գրականություն Մայրենի	Անգլերեն Ռուսերեն Ֆրանսերեն Իսպաներեն Գերմաներեն	Հանրահաշիվ Երկրաչափություն Մաթեմատիկա (5-րդ և 6-րդ դասարաններ) ՏՀՏ Ինֆորմատիկա	Կենսաբանություն Քիմիա Ֆիզիկա Աշխարհագրություն Բնագիտություն

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱ-ԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԱՐՎԵՍՏՆԵՐ	ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒ-ԹՅՈՒՆ	ԽՄԲԱԿՆԵՐ ԵՎ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ
	Կերպարվեստ Երաժշտություն Պարարվեստ Տեխնոլոգիա	Մարմնակրթություն Շախմատ	Ռուսերեն Անգլերեն Հմուտ ձեռքեր Սպորտային խաղեր
Հայոց պատմություն Համաշխարհային պատմություն	Ազգային պար Երաժշտություն Կերպարվեստ	Մարմնակրթություն Շախմատ ՆԶՊ	Գիտություն Սպորտային խաղեր Ազգային պար Ֆրանսերեն Մաթեմատիկա Ռոբոտաշինություն

«ԱՅԲ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

	ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ	ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒ-ԹՅՈՒՆ և ՆԶՊ	ՄԱԹԵՄԱՏԻԿԱ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*	Հայոց լեզու Հայ գրականություն Հայոց պատմություն	Անգլերեն	Մարմնակրթություն ՆԶՊ[1]	Մաթեմատիկա[2] (վիճակագրություն, հավանականություն) և երկրաչափություն ՏՀՏ

25 ԱՌԱՐԿԱ

* «Այբ» ավագ դպրոցում մի շարք առարկաներ դասավանդվում են ստանդարտ և խորացված մակարդակներով:

[1] Նախնական զինվորական պատրաստության դասընթացն իրականացվում է ուսումնառազմական բանակում:
[2] Համատեղ հավաստագրվում է նաև Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի կողմից:
[3] Համատեղ հավաստագրվում է նաև Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի կողմից:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ[3]	ՀԱՍԱՐԱԿԱ-ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ	ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ՌՈՒՍԵՐԵՆ	ԱՐՎԵՍՏ	ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱ-ՌՈՒԹՅՈՒՆ (ԱԿՈՒՄԲՆԵՐ)
Ֆիզիկա Քիմիա Կենսաբանություն	Համաշխարհային պատմություն Գործարարություն Հասարակա-գիտություն Աշխարհագրություն	Ռուսերեն Ֆրանսերեն Գերմաներեն Իսպաներեն	Տեսողական արվեստ Բեմարվեստ Արվեստի պատմություն Ազգային պար Երգչախումբ նվագախումբ	Մտածելու հմտություններ «Արվեստանոց» (կերպարվեստ) Ինժեներական (ռոբոտաշինություն) «Տեխնոշարժ» (ծրագրավորում) «Այբպրեսս» (մեդիա արտադրություն) «Մեդիագիտակների ակումբ» «Ռոքեստր» (նվագախումբ) «Կանաչ քիմիա» (քիմիա) F8 (լուսանկարչություն) Film Factory (ֆիլմարտադրություն) Ծրագրավորման (SS)

10 ԱԿՈՒՄԲ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱԲ-ի առարկայացանկի տարբերակիչներից է նախագծային ուսումնառությունը (project-based learning), որն «Այբ» դպրոցում 2015 թ. ներդրված նորարարական կրթական մոդել է՝ հիմնված «սովորել գործելով» սկզբունքի վրա: Այն կառուցում է ուսումնառությունը նախագծերի շուրջ: Այս ծրագրի շրջանակում աշակերտները կազմում են թիմեր և իրականացնում մեծածավալ երկարաժամկետ նախագծեր, որոնք ուղղված են իրական համայնքային խնդիրների լուծմանը: Նախագծերի իրականացման արդյունքում զարգանում են աշակերտների մի շարք կարևորագույն հմտություններ՝ թիմային աշխատանքը, բիզնես մտածելակերպը, պատասխանատվությունը, աշխատանքի պլանավորումն ու բաշխումը, ժամանակի կառավարումը, առաջնահերթությունների որոշումը և այլն: Նախագծային ուսումնառության շնորհիվ աշակերտները, փորձելով սեփական ուժերն այս կամ այն ոլորտում, հաճախ կողմնորոշվում են նաև ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Ռոք, արվեստ, մեդիա ու ռոբոտաշինություն, ծրագրավորում, ֆիլմարտադրություն և ուրբանիստիկա. 2020-2021 ուսումնական տարում ձևավորվեցին նախագծային ուսումնառության 10 ակումբ:



քաշի».
«Մեծերի խոսակցությանը
մի խառնվի».
«Ներս մտնելիս մաքրի
կոշիկները».
«Ծիծաղիր այնպես, որ
թուքդ չցայտի ուրիշի
երեսին».
«Ձեռդ գրպանդ մի դիր,
ասում է՝ ես մի քուրդ
գրպանահատ մնացել
«տանը լուսաբաց ուրիշներին
մի սպասումի».
«ոչինչի տանը գրպանում
մի գնան».
«թանը խառնելիս մի
գդալացրուս քսանիսկ
«մեկ՝ ձեզ մեր հարգանքը
ասում»-ասելիս».
«ոչ-ոչ մեր հարգանքը
վերադարձնեմ».
«լիրոցրու»

«Բրդուճը ձեռիդ բակ մի վազի».
«Ծամելիս մի խոսիր կամ մի ծամիր խոսելիս».
«պատերին գրվածները մի կարդա».
«այգում համբուրվող զույգերին մի նայի».
«փողոցային շանը ներս մի բեր».
«գետնին ընկած հացը բարձրացրու»
եւ այլն, եւ այլն, եւ այլն:

ՏԱՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՄ

ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ, «ԹԱՔՆՎԱԾ ԳԱՆՁԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ»

«Արցախ. եռաձայն պայքար» նախագծի շրջանակում ստեղծվեց երեք մասից բաղկացած հեռուստաֆիլմաշար, որը մերօրյա Արցախյան պատերազմը ներկայացնում է աշակերտների տեսանկյունից՝ անդրադառնալով մարդ-մշակույթ-եկեղեցի անխախտ եռամիասնությանը:

«ԱՅԲՊՐԵՍ» ԱԿՈՒՄԲ, «ԱՅԲ 10/10»

Նորաստեղծ ակումբը պատրաստեց «Այբ» դպրոցի տասնամյակին նվիրված առցանց ամսագիր, որն ամփոփում է դպրոցի տասնամյա գործունեությունը:

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ, «ԲԱՑ ԱՐՎԵՍՏ»

Նախագծի շրջանակում տեղի ունեցավ լուսանկարչական ցուցահանդես, որում աշակերտները ֆոտոպատմություններով հանրությանը ներկայացրեցին ժամանակակից արվեստագետների (երաժիշտ, նկարիչ, լուսանկարիչ, գրող և այլն) ,որոնք քիչ հայտնի են:

«ԱՐՎԵՍՏԱՆՈՑ» ԱԿՈՒՄԲ, «ԱՐՏԱԴԱՍ»

Նախագծի շրջանակում մշակվեց արվեստի ուսուցողական ձեռնարկ, որի փորձնական կիրառումը տեղի ունեցավ Դիլիջանի համայնքային կենտրոնում Տավուշի մարզի 7-ից 10-րդ դասարանների աշակերտների համար: Ակումբի երկրորդ նախագիծն էր «Draw the Justice» ծաղրանկարների և նկարազարդումների շարքը: Նպատակն էր լուսաբանել մեծ հնչեղություն ու կարևորություն ունեցող թեմաներ:

«ՌՈՔԵՍՏՐ» ԱԿՈՒՄԲ, «ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Տիկնիկային թատրոնում տեղի ունեցավ «Պատրաստված է Հայաստանում» խորագրով համերգ-շնորհանդես: Ակումբի անդամները կատարեցին հայկական ռոքի հիթերը իրենց մեկնաբանմամբ: Տեղի ունեցավ նաև հայկական ռոք երաժշտությանը նվիրված կայքի շնորհանդեսը:

«ՏԵԽՆՈՇԱՐԺ» ԱԿՈՒՄԲ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՔ

Նախագծի շրջանակում ստեղծվեց առցանց հարթակ Արցախի և Հայաստանի տարածքներում հայկական մշակութային կոթողների պատմության մասին տեղեկություններ ու փաստեր հավաքելու համար: Հարթակը հետագայում կարող է ծառայել որպես ճամփորդական ուղեցույց:

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ, «ՍԱՐՏԱՐ»

Նախագծի շրջանակում աշակերտները ստեղծեցին բազմագործառական ռադիոազդանշանային սարքի նախանմուշ, որը թույլ կտա օգտագործողին գտնվելու վայրի մասին տեղեկություններ հաղորդել ռադիոազդանշանային հեռարձակման եղանակով: Այն կարող է օգտակար լինել արշավականներին:

«ՈՒՐԲԱՆԻՍՏ» ԱԿՈՒՄԲ, «ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԱՅԳԻ»

Նախագծի շրջանակում աշակերտները մշակեցին քաղաքային միջավայրի բարելավմանն ուղղված նախագծային հայեցակարգ, որի նախնական իրագործումը նախատեսվում է «Այբ» դպրոցի տարածքում:

ՄԵԴԻԱԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ, «ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Նախագծի շրջանակում աշակերտները ուսումնասիրել են հայկական մեդիան, պատրաստել ուսուցողական հոլովակներ, որոնց նպատակն է բարձրացնել մեդիագրագիտության ընդհանուր մակարդակը Հայաստանում:

ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԱԿՈՒՄԲ , «ԲՈԼՈԼԱ»

Նախագծի շրջանակում աշակերտները կատարելագործեցին բջջային հավելվածը, որը ստեղծվել էր դեռ նախորդ ուսումնական տարում ակումբի անդամների կողմից: «Բոլոլա»-ն հարթակ է, որ շահառուին կարող է տրամադրել Երևան քաղաքում A կետից B կետ տանող երթուղիների ցանկը:

«ԱՅԸ» ՀԱՄԱՅՆՔ.
ՄԻՑԱՎԱՅՐ ԵՎ ՄԱՐԴԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ
ԱՆՁՆԱԿԱԶՄ

ՄԻՋԱՎԱՅՐ

«Այբ» կրթական հանգույցը զբաղեցնում է 6,95 հա տարածք Երևանի Արաբկիր համայնքի Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում: Դպրոցն ունի 3 մասնաշենք՝ ընդհանուր 7000 քմ ուսումնական մակերեսով, և զինված ու համալրված է ժամանակակից ուսումնական տեխնոլոգիաներով, ռոբոտիկայի, քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներով, արվեստանոց-լաբորատորիայով, սպորտդահլիճներով և համերգային դահլիճներով:

«Այբ» կրթական հանգույցի ճարտարապետական յուրօրինակ լուծումները հայ ճարտարապետների և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ու Հարվարդի համալսարանի առաջատար մասնագետների ու գիտնականների համատեղ աշխատանքի արդյունք են:

Ճարտարապետական նախագծում հաշվի են առնվել դպրոցաշինության ժամանակակից զարգացումները և համաշխարհային փորձառությունը: «Այբ» կրթական հանգույցը ստեղծված է՝ դառնալու յուրատեսակ կրթական ավան՝ իր բոլոր ենթակառուցվածքներով՝ դպրոց, ֆաբլաբ, գիտության ու տեխնոլոգիայի կենտրոն, եկեղեցի ու համայնքային կենտրոն, մանկապարտեզ, սպորտային համալիր, հանրակացարաններ, կանաչապատ տարածքներ և այլն: Դպրոցում սովորում է 477 աշակերտ (2021 թ. սեպտեմբերի դրությամբ), որոնց թվում են ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի (ընդհանուր թվի մոտ 10%-ը) քաղաքացիներ:



6.95 ՀԱ
ՏԱՐԱԾՔ
7000 ՔՄ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱԿԵՐԵՍ

«ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ.
ՄԱՐԴԻԿ

«Այբ»-ի՝ կրթությամբ վերափոխելու գաղափարը համախմբել է այնպիսի մարդկանց, որոնք կյանքում կայացել են կրթության շնորհիվ և իրենց ժամանակը, ֆինանսական միջոցներն ու հեղինակությունը ներդնում են հայկական կրթության զարգացման գործում: Այն, ինչ երեկ երազանք էր թվում, այսօր իրականություն է շնորհիվ այս մարդկանց ստեղծարար հավատի ու համագործակցության:

«Այբ» դպրոցը, որը երկրի կրթական նորագույն զարգացումների ուղենիշ է, կյանքի է կոչվել բազմաթիվ գաղափարակիցների, բարերարների ու աջակիցների վստահության ու ջանքերի շնորհիվ:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

«Այբ» դպրոցի բարձրագույն ղեկավար մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որն ունի ցանկացած որոշում կայացնելու կամ վերանայելու լիազորություն: «Այբ» դպրոցը հիմնադրամ է՝ ոչ առևտրային, ոչ պետական կազմակերպություն, որը չունի սեփականատերեր, փայատերեր կամ բաժնետերեր: Դպրոցի տերն այն մարդիկ են, ովքեր կամավոր ստանձնել են հոգատար և պատասխանատու լինելու առաքելության իրենց մասը և համատեղ ջանքերով, հոգաբարձուների խորհրդի միջոցով, կյանքի են կոչում դպրոցի նպատակները: Հոգաբարձուների խորհրդի որոշումները վերջնական են և ենթակա չեն բողոքարկման:

ՀԽ-ում ներգրավված են ինչպես «Այբ» համայնքի, այնպես էլ հասարակական ու մասնագիտական ոլորտների հայտնի ներկայացուցիչներ: 2019 թվականի դեկտեմբերին առաջին անգամ ընտրությունների միջոցով կազմավորվեց դպրոցի ՀԽ նոր կազմը: Այն յուրահատուկ է նրանով, որ առաջին անգամ ՀԽ կազմում ներկայացուցիչ ունեն դպրոցի շրջանավարտների և ուսուցչական համայնքները՝ ի դեմս շրջավարատ Արիս Բերբերյանի և հայոց լեզվի առարկայախմբի ղեկավար Անահիտ Հովհաննիսյանի:

Հոգաբարձուների խորհուրդ

Ռուբեն Հարությունյան
Հոգաբարձուների խորհրդի
նախագահ, Ռուսաստան

Անահիտ Ադամյան
Հայաստան/Ռուսաստան

Անահիտ Հովհաննիսյան
Հայաստան

Արթուր Ալավերդյան
Հայաստան/Ռուսաստան

Արթուր Ջանիբեկյան
(լիազորված անձ՝
Հակոբ Հակոբյան), Ռուսաստան

Արիս Բերբերյան
Հայաստան

Դավիթ Յան
(լիազորված անձ՝ Հովհաննես
Աթաբեկյան), Ռուսաստան

Սարգիս Բադալյան
Հայաստան

Վազգեն Յակուբյան
Հայաստան

Տիգրան Հարությունյան
Հայաստան

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Այբ» դպրոցում 2018 թվականի դեկտեմբերից գործում է խորհրդատվական խորհուրդ: Կազմում ընդգրկված հեղինակավոր անձանց գիտելիքը և փորձառությունն ընդգրկում են ամենատարբեր ոլորտներ՝ կրթությունից և բարձր տեխնոլոգիաներից մինչև մեդիադաշտ ու մարդասիրություն: Խորհրդատվական խորհրդի հիմնական գործառույթը դպրոցի ռազմավարական ծրագրերի վերաբերյալ խորհուրդներ և առաջարկներ տրամադրելն է: Խորհրդի ստեղծումն արտացոլում է դպրոցի կատարած ներդրումը կրթության նորարարության ոլորտում և ամրագրում համաշխարհային կրթության զարգացումներին համընթաց քայլելու և Հայաստանի երեխաներին լավագույն կրթության հնարավորություն ընձեռելու՝ «Այբ» դպրոցի տեսլականը:

Խորհրդատվական խորհուրդ

Նուբար Աֆեյան
Flagship Ventures, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ

Ռուբեն Վարդանյան
Հայաստան/Ռուսաստան

Դավիթ Յան
ABBYY, iiko

Թիմ Օութս
Քեմբրիջի համալսարան

Փատրիկ Դերհամ
Վեստմինստերյան դպրոց

Մայքլ Ռեյս
Լոնդոնի համալսարանական քոլեջ

Լարա Սեդրակյան
News Deeply, Bloomberg TV, ABC News

Մեսրոպ քհն. Արամյան

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄ

«Այբ» դպրոցն ունի ավելի քան 170 աշխատակից (ադմինիստրատիվ անձնակազմ, ուսուցիչներ), որոնց մի մասը միաժամանակ ներգրավված է նաև «Այբ»-ի այլ կառույցներում՝ «Այբ» կրթական հիմնադրամում և Դիլիջանի կենտրոնական դպրոցում:

«Այբ»-ի հաջողության գրավականն են մեր ուսուցիչները: Անհնար է պատկերացնել որակյալ կրթական միջավայրն առանց բարձրակարգ մասնագետների: 21-րդ դարի հայկական կրթական միջավայր կերտելու մեր գործին միացել են բազմաթիվ հայտնի մասնագետներ ոչ միայն Հայաստանից, այլև արտերկրից: «Այբ» դպրոցի ուսուցչական կազմը համալրելիս մենք մեր առջև խնդիր ենք դրել դպրոց բերել մարդկանց, ովքեր հասարակական կարևոր ոլորտների ու հաստատությունների լավագույն մասնագետներ են և կարող են ոչ միայն իրենց գիտելիքն ու փորձը փոխանցել աշակերտին, այլև օրինակ դառնալ նրա համար, վառել նրա մեջ ուսման հանդեպ կրակը, սովորեցնել նրան սիրել առարկաները:

Կրթական հանգույցի ստեղծագործական ծրագրերում ներգրավված են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ գիտնականներ, արվեստագետներ, գործարարներ՝ ապահովելով դպրոցի կապը կյանքի և տեխնոլոգիաների նորագույն զարգացումների հետ:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԻ**



ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Դարերի ընթացքում աշխարհի քաղաքակրթություններում և մշակույթներում ձևավորվել են մարդկային արժեքների որոշակի պատկերացումներ, և շատ հաճախ մարդը սահմանվել է որպես որոշակի առաքինությունների կամ բարոյական չափանիշների կրիչ: Բոլոր ժամանակներում կրթության հիմնախնդիրներից մեկը եղել և մնում է սովորողի արժեքային և որակական նկարագրի կերտումն ըստ տվյալ հասարակության ինքնության, բարոյական չափանիշների և ապագայի տեսլականի:

Դպրոցը՝ որպես մարդու կերտման ու ձևավորման գլխավոր օջախ, ստեղծում են ոչ թե տնօրենը կամ ուսուցիչները, այլ համայնքը, իսկ աշակերտն այդ համայնքի գլխավոր դերակատարն է: Աշակերտի ներդրումը դպրոցաշինության ու համայնքաշինության մեջ նույնքան կարևոր է: Դպրոցի կենտրոնում գտնվում է մարդը՝ աշակերտը՝ իր տեսակով, իր ուրույն նկարագրով, և նրա շուրջ է տարվում ամբողջ աշխատանքը: «Այբ»-ի միջավայրը, որն ապահովում է դպրոցի բոլոր հաջողությունները, ստեղծում են աշակերտները՝ ուսուցիչների, դպրոցի ղեկավարների, հոգաբարձության հետ համատեղ: Աշակերտներն այստեղ ամբողջապես հավասար և լիարժեք համահեղինակ են այն ամենի, ինչ կատարվում է դպրոցում:

«Այբ»-ի աշակերտի տեսակն առաջին հերթին իր մեջ պարփակում է մարդկային գլխավոր առաքինությունները: Մեր նպատակ է առաջին հերթին օգնել աշակերտին, որ կայանա որպես առաքինություններով ու արժեքներով օժտված լիարժեք անձ՝ մարդ, որը ձգտում է ճանաչելու, համագործակցելու, արարելու, մարդ, որը մտածող է և ստեղծագործող: Եվ եթե մենք առաջնորդվում ենք մարդակերտման այս սկզբունքով, ապա ստանում ենք ներդաշնակ արդյունք՝ և՛ անձնավորություն, և՛ գիտելիքներ:

ԱԲ-ի աշակերտի նկարագրի ութ սկզբունքները հիմնված են հին հունական փիլիսոփայությունից եկած և քրիստոնեության մեջ ամրագրված չորս մարդկային առաքինությունների վրա, որոնք են խոհականությունը, արիությունը, ողջախոհությունը և արդարությունը: Յուրաքանչյուր առաքինություն մենք բացել ենք իր տեսական-ճանաչողական և գործնական-վարքային իմաստներով՝ ստանալով չորս զույգ կամ ութ սկզբունք: «Այբ» դպրոցի ծրագիրը՝ Արարատյան բակալավրիատը, մշակվել է այնպիսի անհատների սերունդներ կերտելու տեսլականով, որոնց բնորոշ են հետևյալ հատկանիշները:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ **ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ**



1 ՃԱՆԱՉՈՂ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐ

Մարդու ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը, տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունը ԱԲ-ի կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է: Ճանաչողությունն ամրապնդվում է փորձառությամբ և պտղաբերում ստեղծագործումով: Իսկ յուրաքանչյուր գործ իմաստավորվում և ամբողջանում է այդ գործից ծնված փորձառական գիտելիքով: ԱԲ-ի աշակերտը ճանաչելով ստեղծում է և ստեղծելով ճանաչում:

2 ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՎԱԾ

Նախաձեռնողը նա է, ով ոչ միայն ինքնուրույն սկսում կամ ձեռնարկում է որևէ բան, այլև ունի արիություն և համարձակություն՝ սկսածն առաջ տանելու և ավարտին հասցնելու: Սակայն, յուրաքանչյուր նախաձեռնության մեջ պետք է լինել հավասարակշռված, այսինքն՝ շրջահայաց, խոհեմ և լուրջ՝ պահպանելով ներքին խաղաղությունը և ցուցաբերելով զսպվածություն: Շրջահայաց նախաձեռնողն անխոհեմ առաջ չի նետվում, այլ պատասխանատվությամբ ծրագրում ու խորհում է, հաշվի առնում ծրագրի բոլոր գործոնները և կողմերը, մարդկանց իր գաղափարի շուրջ հավաքում, ծառայում և առաջնորդում:

3 ԶԳՈՆ ԵՎ ԲԱԺ

Զգոն նշանակում է ոչ միայն արթուն, աչալուրջ և զգույշ, այլև՝ ներքնապես ուշադիր և հավաքված: Մարդկային կյանքը ցրված է մտքերի, հիշողությունների, զգացմունքների, ապրումների մեջ, և կրթության բոլոր ժամանակների գերխնդիրն է՝ սովորեցնել մարդուն հավաքվել, ուշադիր լինել և կենտրոնանալ: Բաց մարդը զերծ է ներքին կապանքներից և սևեռումներից, հաղորդակից է մարդկանց և ունի իրականության զգացողություն: ԱԲ-ի աշակերտը չի առաջնորդվում սոսկ սեփական հետաքրքրություններով և ցանկություններով, այլ բաց է՝ ունեցածը կիսելու և ուրիշներից իրեն տրված բարիքը շնորհակալությամբ ընդունելու:

4 ԲԱՐԵԽՈՀ ԵՎ ՀՈԳԱՏԱՐ

ԱԲ-ի աշակերտը պետք է ձգտի ոչ թե պարզապես ճանաչելու, այլ բարի և բարեբեր ճանաչողության կամ բարեխոհության: Բարին խորհելը և բացահայտելը արդյունավետ ճանաչողության վեկտորն են: Մտքերի բարությունը պետք է արտացոլված լինի նաև մեր գործերում՝ ԱԲ-ի աշակերտը պետք է լինի հոգատար: Հոգատար է նա, ով սեր ունի իր մեջ, փորձում է մարդկանց համար բարիք գործել, պատասխանատու է և անտարբեր չի անցնում իրողությունների կողքով: Բարեխոհությունն ու հոգատարությունը բարոյական լրացումն են «ճանաչող և ստեղծարար» հատկանիշների և շեշտում են, թե ինչ տեսակի ճանաչողությունն ու գործերն են օգտակար:

ԾՆՈՂՆԵՐ

Անհնար է պատկերացնել հզոր դպրոցական համայնք՝ առանց այդ համայնքի կայացման ու զարգացման գործում ծնողների ակտիվ մասնակցության ու ներդրման: Մենք դիտում ենք ծնողին որպես երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակցի: «Այբ» դպրոցն ակտիվորեն ներգրավում է ծնողներին, երեխաների հետ աշխատանքում: Մշակվել ու հաջողությամբ գործարկվում են հետաքրքիր ձևաչափեր, որոնց շնորհիվ դպրոց-ծնող համագործակցությունը տալիս է բարձր արդյունքներ: Օրինակ՝ սովորական «ծնողական ժողով» ասվածը «Այբ» դպրոցում անցկացվում է ծնող-երեխա-ուսուցիչ անհատական հանդիպման ձևաչափով. ոչ միայն քննարկվում են երեխայի հետ կապված հարցեր, այլև նախանշվում ծնողի դերն ու անելիքը երեխայի կրթության ու զարգացման ճանապարհին: Ամսական թեյախմությունների ձևաչափով քննարկումներն ընթացիկ և կարևոր հարցերի շուրջ պաշտոնական խորհրդակցություն են, որում բարձրացված հարցերն ու դրանց հետքերով կայացված որոշումներն ու դրանց արդյունքները արձանագրվում ու տեղեկացվում են ծնողներին: Այս հարթակների ու ծնողի հետ անհատական շփումների շնորհիվ ձևավորվել է ծնող-դպրոց համագործակցության արդյունավետ մշակույթ:

Ծնողները մասնագիտական կարծիքի տեսքով, անհատապես կամ խմբով, մշտապես աջակցում են դպրոցի ներքին կազմակերպչական գործընթացների և այլ բովանդակային հարցերի շուրջ տարբեր որոշումների կայացմանը:

Ծնողները ներհամայնքային միջոցառումների կազմակերպման ակտիվ մասնակից են. նրանք նույնպես երբեմն հանդես են գալիս կրթական, հասարակական ու ժամանցային զանազան միջոցառումների ու նախաձեռնությունների առաջարկներով: Դպրոցում խթանվում ու քարոզվում են բարեգործությունն ու փոխօգնության մշակույթը, և ծնողներն իրենց օրինակով և կազմակերպած բարի գործերով լավագույն օրինակն են երեխաների համար:

Եվ, վերջապես, մեծ ուրախություն է մեր ծնողներին տեսնել «Այբ» դպրոցի բարերարների թվում, ովքեր կարևոր ու շատ գնահատելի ֆինանսական ներդրում են ունեցել ու շարունակում ունենալ «Այբ» դպրոցի ընդլայնման ու համալրման գործում՝ այդպիսով նպաստելով ոչ միայն սեփական երեխայի, այլև նրանից հետո դպրոց եկող սերունդների համար ուսումնական լավագույն պայմանների ապահովմանը:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏԵՐ

«Այբ»-ի ապագայի տեսլականի վառ ապացույցը շրջանավարտներն են, որոնք ծիլեր են նետել մեր հասարակությունում և սկսում են ծաղկել՝ վարակելով շրջապատին իրենց արժեհամակարգով և ապագայի նկատմամբ հստակ պատկերացումներով ու ձգտումներով:

Դպրոցի 10-ամյա պատմության ընթացքում «Այբ»-ը տվել է 419 շրջանավարտ (2021 թ. հուլիսի դրությամբ): Այսօր նրանք սովորում են Հայաստանի և արտերկրի հեղինակավոր բուհերում՝ բարձր պահելով դպրոցի անունը և «Այբ»-ի շրջանավարտի պատվավոր կոչումը: Իսկ առաջին շրջանավարտներից շատերն արդեն իրենց հստակ տեղն են զբաղեցնում աշխատաշուկայում, ինչպես նաև՝ հիմնում են սեփական ընկերությունները: «Այբ»-ի շրջանավարտները դպրոցն ավարտելուց հետո շարունակում են ակտիվ մասնակցել «Այբ» համայնքի կյանքին՝ ընդգրկվելով «Այբ»-ի շրջանավարտների համայնքում, մասնակցելով դպրոցի և հիմնադրամի կողմից իրականացվող մի շարք նախաձեռնությունների, ինչպես նաև համալրելով «Այբ»-ի կառույցների անձնակազմի շարքերը:

2020 թվականին շրջանավարտները նաև ձեռնամուխ եղան «Այբ»-ի շրջանավարտների ակումբի ստեղծմանը: Նպատակը շրջանավարտների համայնքի կայացմանն ու «Այբ»-ի հետ նրանց կապի պահպանմանը նպաստելն է և նրանց ներուժի դրսևորման ու զարգացման համար պարարտ հող ստեղծելը:

2021 թվականին կազմավորվեց «Այբ»-ի շրջանավարտների ակումբը գրանցվեց որպես հասարակական կազմակերպություն, ձևավորվեց խորհուրդը և ընտրվեց ակումբի նախագահը:

Խորհրդի կազմում են՝

Մերի Պողոսյան, 2013թ
Ռիմմա Անանյան, 2014թ
Հայկ Խեկոյան, 2015թ
Լիլիթ Միերյան, 2016թ.
Արմեն Բարսեղյան, 2017թ.
Քնար Օհանջանյան, 2018թ.
Մարիամ Մելքումյան, 2019թ.
Սևակ Մեսրոպյան, 2020թ.

Ակումբի նախագահ է ընտրվել է Ռիմմա Անանյանը:

Շրջանավարտների ակումբի կողմից իրականացվող ծրագրերն ուղղվելու են ընկերական մենտորության համակարգի զարգացմանը, ուսումնական գործընթացում ուսուցիչների և աշակերտների աջակցությանը, ինչպես նաև այլ հետաքրքիր միջոցառումների անցկացմանը: Մեր շրջանավարտները դպրոցի կենսունակության անբաժան և ամենակարևոր մասնիկներից են: Շրջանավարտների զգալի մասը դեռևս ներգրավված է դպրոցի ակտիվ կյանքում: Նրանք պարբերաբար հանդիպում են ավագ դպրոցի աշակերտների հետ, հաղորդակից դարձնում իրենց փորձին և օգտակար խորհուրդներ տալիս:

Ավարտական հանդիսություն 2021

ԴՊՐՈՑԻ ԿՅԱՆՔԸ

2020–2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Ասել, որ ուսումնական տարին ճգնաժամային էր, կնշանակի ոչինչ չասել: Սակայն հենց ճգնաժամային ու օրհասական պահերին է ի հայտ գալիս, թե մարդիկ և հաստատությունները, հատկապես՝ կրթական, ինչով են կենսունակ, ինչ արժեհամակարգային հիմքերով են ամուր: Պատերազմական ու հետպատերազմական շրջաններն ակնհայտ դարձրին որակյալ կրթության և ուսյալ սերունդների աներկբա կարևորությունը:

«Այբ» դպրոցը մեր նորագույն պատմության ամենից բարդ ժամանակահատվածն անցավ և այն դժվարությունները, որոնք ոչ միայն կրթական էին, այլ նախևառաջ՝ մարդկային, համայնքային, ազգային ու պետական, հաղթահարեց հենց նրա շնորհիվ, որ ունի կենսապահպան արժեքներից և այդ արժեքները կրող մարդկանց աշխատանքից կազմված գաղափարային հենք:

ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ

«Այբ» դպրոցի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ «Այբ» դպրոցի գործադիր տնօրեն նշանակվեց Դավիթ Սահակյանը: Տնօրենի ընտրության մրցույթին մասնակցեց 150 թեկնածու:

2020-2021 թթ. ուսումնական տարում «Այբ» դպրոցն ունեցավ ընդհանուր 477 աշակերտ (նրանցից 165-ը՝ «Այբ» ավագ դպրոցում): Այս ուսումնական տարում «Այբ» ավագ դպրոցի աշակերտների 86%-ը ստացավ կրթաթոշակ (ուսման վարձի փոխհատուցում): Աշակերտների 16%-ը (27 աշակերտ) ստացավ կրթաթոշակ ամբողջ ուսման վարձի չափով, 7%-ը (12 աշակերտ)՝ ուսման վարձի մինչև 96%-ի չափով, 44%-ը (73 աշակերտ)՝ ուսման վարձի մինչև 82%-ի չափով, 18%-ը (30 աշակերտ)՝ ուսման վարձի մինչև 30%-ի չափով:

86%

ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

2020-2021 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադաների երեք փուլերին մասնակցել է «Այբ» դպրոցի 137 աշակերտ, որոնցից 53-ն անցել է մարզային փուլ: 9-ը հաղթահարել է հանրապետական փուլի շեմը, իսկ մրցանակային տեղ զբաղեցրել է նրանցից 7-ը:

Միեր Սարիբեկյանը քիմիա առարկայի հանրապետական օլիմպիադայում ստացել է III կարգի մրցանակ, Աիդա Ավետիսյանը՝ II կարգի՝ հայոց լեզվից, Անուշ Մաշինյանը՝ III կարգի՝ գրականությունից, Մերի Գրիգորյանը՝ II կարգի՝ պատմությունից: Գովասանագրերի են արժանացել Նարե Սուքիասյանը, Մերի Ղուլյանը՝ գերմաներենից, Վահան Սարգսյանը՝ պատմությունից:

«Այբ» դպրոցի 12-րդ դասարանցի Էլլա Ավագյանն արժանացավ «Գրանիշ» գրական համայնքի հատուկ մրցանակին՝ «Փողքաստ մշակույթի զարգացման և ժամանակակից հայ գրականության ձայնը դառնալու համար»:

«Այբ» դպրոցի նախագծային ուսումնառության «Կանաչ քիմիա» ակումբի աշակերտների գյուտը՝ բնության մեջ կենսաքայքայվող պոլիմերների ստեղծման նրանց մշակած եղանակը, ստացավ գյուտի արտոնագիր Մտավոր սեփականության գործակալության կողմից և հրապարակվեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական տեղեկագրում:

«Այբ» դպրոցի աշակերտներն առաջին անգամ Հայաստանը ներկայացրին «Իսպանիան և ինքնավար համայնքները» միջազգային մրցույթում և արժանացան միանգամից երեք մրցանակի:

ԱՅԲԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Առցանց նշեցինք սեպտեմբերի 1-ը: Չխախտելով այբական արարողակարգը՝ հնչեց Տերունական աղոթքը և տեղի ունեցավ դրոշի բարձրացման արարողությունը: «Բարի գալուստ դպրոց» այնուամենայնիվ ասացինք նաև առկա: 2020-2021 թթ ուսումնական տարվա մեկնարկին տոնական տրամադրությամբ դիմավորեցինք նորեկ այբեցիներին:

Հոբելյանական տարին նշանավորվեց ուսուցչական վեբինարների շարքով: «Այբ» դպրոցում դասավանդվող առարկայախմբերի ուսուցիչներն առցանց ձևաչափով պատմեցին իրենց առարկայի դասավանդման նոր մոտեցումների մասին, ներկայացրին «Այբ»-ում կիրառվող գործիքակազմը, դասարանային աշխատանքի հմտությունները և այլն: Ընդհանուր առմամբ տեղի ունեցավ 10 վեբինար:

Տեղի ունեցավ «Այբ» կրթական հիմնադրամի 15-ամյակի և «Այբ» դպրոցի 10-ամյակի կապակցությամբ մշակված նոր բրենդավորման ներկայացման միջոցառումը: Նոր տարբերանշանները մշակել է մեր գործընկեր Indigo Branding Agency-ին:

«Սերնդեսերունդ». 8 սերունդ և 370 շրջանավարտ՝ մեկ հարկի տակ: Հավաքույթի ընթացքում ազդարարվեց «Այբ»-ի շրջավարտների ակումբի ձևավորման գործընթացի մեկնարկը: Հաջորդիվ վերջնական ձևավորվեց և պաշտոնական գործունեությունը սկսեց «Այբ»-ի շրջանավարտների ակումբը: Կայացան ակումբի խորհրդի անդամների և նախագահի ընտրությունները: Շրջանավարտների ակումբի նախագահ ընտրվեց 2014 թվականի շրջանավարտ Ռիմմա Անանյանը:

Տեղի ունեցան արվեստի առարկայախմբերի հաշվետու համերգներն ու ցուցահանդեսը: Բեմարվեստի խումբը ներկայացավ փոքր բեմադրություններով և մենադերվագներով, պարախումբը ելույթ ունեցավ ազգային պարի լավագույն կատարումներով, 1-ից 12-րդ դասարանների աշակերտների նկարչական աշխատանքներն էլ ցուցադրվեցին դպրոցի տարածքում: Կայացավ ռոք-երաժշտախմբի համերգը:

ԱՅԲԱՏՈՆ

Առցանց նշեցինք մեր հանրապետության կարևորագույն տոներից մեկը՝ Անկախության օրը: Կազմակերպիչներ՝ «Այբ» դպրոցի պատմության ուսուցիչներ Սարգիս Բալդարյան, Նինա Հայրապետյան, Դավիթ Կարապետյան, Վահագն Հակոբյան, համակարգող՝ Լիլիթ Մինասյան:

Նշեցինք Կամավորի միջազգային օրը, որին նվիրված էր առցանց պանելային քննարկում: Կամավորությունը «Այբ»-ի արժեհամակարգային հիմնասյուներից է, առանց որի անհնար է պատկերացնել դպրոցն ու առհասարակ «Այբ» համայնքը:

Հագնվիր քո սիրելի կերպարի պես. Բուն բարեկենդանի տոնին ընդառաջ «Այբ»-ում հայտարարված էր ամենաուրախ հատուկ օրը՝ կերպարների օրը:

Գրքի տոնը «Այբ»-ում. «հյուրընկալեցինք» Ամենայն հայոց բանաստեղծին, դիտեցինք թումանյանական ներկայացումներ, միմյանց ու դպրոցի գրադարանին գիրք նվիրեցինք և ֆլեշմոբ-ընթերցում կազմակերպեցինք:

Նշեցինք Երկիր մոլորակի միջազգային օրը, որով ևս մեկ անգամ կարևորեցինք երկրագնդի մաքրության գաղափարի կարևորությունը: Այբեցի փոքրիկները ծառեր տնկեցին, բնությանը չվնասելու կոչերով բացիկներ պատրաստեցին, իրականացրին շաբաթօրյակ:

Համբարձման տոնին, եկեղեցական արարողակարգից զատ, իրականացվեց նաև ժողովրդական մասը: Մասնակիցներն ավանդական վիճակ գցեցին ու խաղացին «Ջանգյուլում»:

«Այբ» դպրոցի պարուսույց Գագիկ Գինոսյանի ուղեկցությամբ աշակերտներն այցելեցին Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր և իրենց ոգեղեն պարային կատարումներով ապացուցեցին, որ գալիքը լինելու է է՛լ ավելի պայծառ, հզոր ու հաղթական:

Հնչեց «Այբ» ավագ դպրոցի 9-րդ սերնդի 49 աշակերտի վերջին զանգը: Իսկ հիմնական դպրոցն ավարտեց 31 աշակերտ, որոնց մեծ մասն ուսումը կշարունակի «Այբ» ավագ դպրոցում:

Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիկան թատրոնում տեղի ունեցավ 9-րդ սերնդի ավարտական հանդիսավոր արարողությունը: «Այբ» ավագ դպրոցն ավարատած 49 շրջանավարտները ընդրգկվեցին մենտորության ծրագրում:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Այբ» ավագ դպրոցում Climate Uturn-ն իրականացրեց բնապահպանական առցանց դասընթաց: Այն կայուն զարգացման և իրազեկման մակարդակի բարձրացման հարթակ է և մեկնարկել է 2 տարի առաջ IDeA հիմնադրամի օգնությամբ:

«Այբ» ավագ դպրոցի աշակերտներն Արցախի պատմամշակութային ժառանգության մասին դասընթաց անցկացրին սփյուռքի հայ փոքրիկների համար «Թենի թայմ» նախաձեռնության շրջանակում: Համագործակցության երկրորդ փուլով էլ այբեցիները սփյուռքահայ փոքրիկներին պատմեցին զատկական ազգային ավանդույթների մասին:

«Այբ» ավագ դպրոցը ռուսաստանյան «Կյանքի դպրոցի» («Школа жизни») հետ համագործակցությունը սկսեց միջին դպրոցում՝ 8-րդ դասարանում: Ծրագրի նպատակը միջին դպրոցի աշակերտների միջմշակութային հաղորդակցությունն է ռուս աշակերտների հետ:

12-րդ դասարանի 6 աշակերտ մասնակցեց Գյոթեի ինստիտուտի կազմակերպած Test-DaF դասընթաց-վերապատրաստմանը, որի արդյունքում նրանցից 4-ը DAAD-ի կողմից ստացել են հնարավորություն դիմելու գերմանական բուհում ուսանելու կրթաթոշակային հատուկ ծրագրին, որը Հայաստանում երկրորդ անգամ է ներկայացվում:

Աշակերտներից Լիլիթ Մինասյանը, հավաքելով առավելագույն միավորներ (19 միավոր՝ հնարավոր 20-ից), ստացել է հատուկ անվանական կրթաթոշակ DAAD-ից, ինչով նման հնարավորության նախադեպ է ստեղծել նաև հետագա սերունդների համար: Լիլիթը կստանա ամբողջական կրթաթոշակ որևէ գերմանական բուհում ուսանելու համար:

«Այբ» դպրոցի շրջանավարտներ Սյուզաննա Երկնափեշյանը, Սերգեյ Բաղալյանը, Ռուբեն Քերոբյանը «Կլիմայի փոփոխությունն ու երեխաները. ազդեցություն, իրավունքներ և մասնակցություն» միջազգային գիտաժողովում ներկայացրին նախագծային ուսում-նառության «Կանաչ քիմիա» ակումբի մշակած, բնության մեջ ինքնաքայքայվող պլաստիկների նախագիծը:

«Այբապատում» նախագիծն այս ուսումնական տարի համավարակի պատճառով անցկացվեց առցանց, և «հյուրընկալվեցինք» Ներքին Կարմիրաղբյուր ու Ներքին Ծաղկավան գյուղերի դպրոցներում:

ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ
ԵՎ ՀՅՈՒՐԵՐ

«Աստղաֆիզիկոս, գիտնական, դոկտոր, «Ստարմուս» (Starmus) փառատոնի հիմնադիր Գարիկ Իսրայելյանն աշակերտներին պատմեց իր մասնագիտական ընտրության, աստղաֆիզիկայի հանդեպ հետաքրքրության առաջացման, գիտության և երաժշտության համատեղության մասին, ինչպես նաև պատասխանեց աշակերտների հարցերին:

Գենետիկայի մասնագետ, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի Էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը խոսեց այն մասին, թե ով ենք մենք, ովքեր են մեր հարևանները, ազգաբանական հարցերում ինչն է ճշմարիտ և ինչը՝ ոչ:

Հեռավար հանդիպեցինք նաև քարտեզագիր Ռուբեն Գալչյանի հետ՝ ծանոթանալու աշխարհի հնագույն քարտեզների վրա Հայաստանի մասին վկայություններին: Հանդիպումը վարեցին պատմության ուսուցիչներ Լիլիթ Մինասյանը և Ջուլիետա Կճանյանը:

Հայկական բանակի հիմնադրման 29-ամյակի առթիվ տեղի ունեցավ առցանց պանելային քննարկում: Խոսնակներն էին Արցախյան երկրորդ պատերազմի մասնակից այբեցիները՝ ուսուցիչներ, աշխատակիցներ, շրջանավարտներ:





Ինչպե՞ս երեխաներին պաշտպանել առցանց աշխարհի վտանգներից: Կիբերանվտանգության թեմայով զրուցարանի խոսնակներն էին «Թվային աջակցություն քաղհասարակությանը» վերլուծական կենտրոնի համահիմնադիր Սամվել Մարտիրոսյանը, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արամ Փախչանյանը և «Այբ» դպրոցի ավագ հոգեբան Սոլանժ Թամամյանը:

Ովքե՞ր են մեր ժամանակի դասականները և ի՞նչ կարդալ: Ժամանակակից գրականության թեմայով առցանց պանելային քննարկմանը մասնակցեցին գրող Արտավազդ Եղիազարյանը, գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը և «Այբ» դպրոցի հայոց լեզվի առարկայախմբի ղեկավար Անահիտ Հովհաննիսյանը:

«Այբ» դպրոցում հյուրընկալեցինք ManyChat-ի համահիմնադիր Միքայել Յանին: Աշակերտների հետ նա զրուցեց այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսին են սկսնակ ընկերության (ստարտափ) ստեղծման գործընթացը, բիզնեսում հաջողության հասնելու գաղտնիքները, տեխնոլոգիաների ազդեցությունը մեզ վրա և այլն:

«Ինչո՞ւ է կարևոր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը». կայացավ հեռավար հանդիպում Մերձբալթյան հանրապետություններում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Տիգրան Մկրտչյանի հետ: Հանդիպումը նախաձեռնեց և վարեց պատմության ուսուցիչ Լիլիթ Մինասյանը:

Ինչ են ազատությունը և երջանկությունը, որո՞նք են այբական արժեհամակարգի հիմնասյուները: 12-րդ դասարանի աշակերտները հանդիպում-զրույց ունեցան «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արամ Փախչանյանի հետ:

«Այբ»-ի համահիմնադիր Տեր Մեսրոպ քահանա Արամյանը 10-րդ դասարանի աշակերտներին պատմեց «Այբ»-ի ակունքների, գաղափարախոսության, սկզբունք-

ԻՆՉ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼ

Մասնագիտական կողմնորոշման բաժինը տարվա ընթացքում ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպեց մի շարք հանդիպումներ «Զում» հարթակում տարբեր արտասահմանյան բուհերի ներկայացուցիչների հետ:

Տեղի ունեցան հանդիպումներ՝

- «Այբ»-ի՝ Գերմանիայում սովորող շրջանավարտների և «Այբ» ավագ դպրոցի աշակերտների միջև

- Լիտվայի ամերիկյան համալսարանի (LLC International University) ընդունելության հարցերով զբաղվող մասնագետի հետ

- Դիզայնի եվրոպական ինստիտուտի (Istituto Europeo di Design) պրոֆեսոր, գեղարվեստական տնօրեն Ջովանի Օտոնելոյի հետ

- Բելառուս ռեժիսոր-անիմատոր Միխայիլ Տումելյայի հետ

- «Այբ»-ի՝ ԱՄՆ-ում սովորող շրջանավարտների հետ

- Կանադական UBC համալսարանի ներկայացուցիչ Թոմ Ուիտեկերի հետ

- «Այբ» դպրոցի՝ հայաստանյան բուհերում ուսանող շրջանավարտների հետ

- Ռեժիսոր, սցենարիստ, դերասան Պատրիկ Մալաքյանի հետ

- Սան Ֆրանցիսկոյում գտնվող Minerva Schools at KGI-ի ներկայացուցչի հետ

- Պորտսմուտի համալսարանի ներկայացուցիչ Ջոնաթան Ուիլիամսի հետ

ԱՅԲԱՐԿԵՏՍ

«Այբ» դպրոցում արվեստի դասաժամերը ստանում են իրենց հատուկ ազատությունը՝ չսահմանափակվելով միայն դասարանային պատերով ու հնարավորություն տալով ծանոթանալու, տեսնելու ու հարաբերվելու արվեստի հետ հենց արվեստի տանը:

10-րդ դասարանի աշակերտներն արվեստի պատմության արտագնա դասերն անցկացրին Ավանի Կաթողիկե եկեղեցում և Պտղնավանքում:

Ուսումնական արշավներն այբական կրթության գլխավոր բաղադրիչներից են: Ավագ դպրոցի աշակերտներն այցելեցին Խոր վիրապ, Տափի բերդ և Հրեշտակների ձոր, Սմբատաբերդ ու Ցաղաց քար, Սպիտակավոր եկեղեցի:

«Նիկոլայ Նիկողոսյան» մշակութային հիմնադրամում բացվեց «Այբ»-ի աշակերտների աշխատանքների ցուցահանդեսը: Հիմնադրամի հետ կրթական ծրագրի շրջանակում 12-րդ դասարանի մի խումբ աշակերտներ, տեսողական արվեստ առարկայի ուսուցիչ Մարի Ադամյանի գլխավորությամբ, մասնակցեցին լինոփորագրության դասընթացների:

«Այբ» դպրոցի 10-ամյակին նվիրված միջոցառումներց էր «10 տարվա արվեստը. դպրոցից թանգարան» ցուցահանդեսը: Դպրոցի տասը տարիներն ամփոփվեցին «Այբ»-ի բոլոր ստեղծագործ աշակերտների և շրջանավարտների նկարներում, որ պատկերում էին տարիների և այբական կյանքի բոլոր գույները:

ԱՐՑԱԽՅԱՆ 2-ՐԴ ՊԱՏԵՐԱԶՄ

«Այբ» ընտանիքը միացավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» դրամահավաքին: «Այբ»-ի խոշոր բարերարները կրկնապատկեցին նվիրաբերված գումարը, արդյունքում հիմնադրամին փոխանցվեց 125 118 ԱՄՆ դոլար:

«Այբ» դպրոցն իր կրթական հովանու տակ վերցրեց Արցախից տեղահանված 25 աշակերտների՝ ապահովելով վերջիններիս անվճար կրթությունն ու կրթության անընդհատությունը:

Պատմության ուսուցիչ Լիլիթ Մինասյանի աջակցությամբ ու անմիջական մասնակցությամբ կայացավ «Արցախյան պատերազմ. մեր օրեր» խորագրով հեռավար հանդիպումը ՀՀ անվտանգության խորհրդի նախկին խոսնակ, վերլուծաբան Արեգ Քոչինյանի և «Այբ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արամ Փախչանյանի հետ:

«Այբ»-ի շրջանավարտները պատերազմական շրջանում ներգրավված էին թիկունքային կարևոր նախաձեռնություններում և կամավորական աշխատանքներում: Նրանք նաև կազմակերպեցին բարեգործական աճուրդ: 6 օր տևած աճուրդի ընթացքում, վաճառելով հետաքրքիր ու յուրօրինակ իրեր, հավաքեցին 292.000 դրամ: Նախաձեռնության ողջ հասույթն ուղղվեց Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնին:

ՑԱՎԱԼԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Արցախյան երկրորդ պատերազմում հերոսաբար ընկավ «Այբ» դպրոցի 2020 թվականի շրջանավարտ Լևոն Հովսեփյանը: Նա պատերազմից ընդամենը 2 ամիս առաջ էր ծառայության անցել Արցախի պաշտպանության բանակում: Արցախ աշխարհի զավակն անմահացավ Արցախի լեռներում...

Հիշատակդ՝ հավերժ, սխրանքդ՝ անմար,
մեր սիրելի՛ Լևոն:

Եվս մեկ պատերազմ, այս անգամ՝ կորոնավիրուսային համավարակի դեմ, մեզնից խլեց «Այբ» համայնքի երկու սիրելի անդամի: Կյանքից անժամանակ հեռացան շրջանավարտների մենտորներ, «Այբ»-ի ընկերներ և բարերարներ Վիկտոր Ակուլյանը և Սամվել Դովլաթյանը:

Ձեր հիշատակն՝ անմար, վարձքը՝ կատար,
սիրելի՛ Սամվել և Վիկտոր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	2020-2021 թթ.
Գործառնական գործունեությունից ներհոսք	1 063 256 229
Ներհոսք ուսման վարձերից	965 504 705
«Այբ» կրթական հիմնադրամի նվիրատվություններ դպրոցի դեֆիցիտի ծածկման համար (կրթաթոշակային ֆոնդ)	55 871 867
Նպատակային և կանոնադրական նպատակների համար նվիրատվություններ	32 893 936
Ներհոսք ենթակառուցվածքներից և ծառայությունների մատուցումից	6 603 209
Աշակերտներին վերաբերող այլ մուտքեր	2 382 512
Գործառնական գործունեությունից արտահոսք	953 659 381
Վարչական ծախսեր	341 079 962
Վարչական անձնակազմի ծախսեր, այդ թվում՝ աշխատավարձային ֆոնդ, սոցիալական փաթեթ և վարչական աշխատողների զարգացման ծախսեր	231 275 031
Կոմունալ ծախսեր դպրոցի գույքի և շրջակա միջավայրի պահպանում և բարեկարգում	82 783 615
Դպրոցի SS համակարգի պահպանում և բարելավում	6 780 928
Մարկետինգ, հաղորդակցություն և ֆոնդահայթայթում	3 173 280
Մասնագիտացված ծառայությունների արտապատվիրում	5 194 860
Գրասենյակային, ներկայացուցչական և այլ վարչական ծախսեր	11 872 248
Կրթական գործընթացի ուղղակի ծախսեր	609 044 513
Ուսուցիչների և կրթական գործընթացին աջակցող անձնակազմի աշխատավարձային ֆոնդ	441 130 724
Աշակերտների ծախսեր (գրականություն, սնունդ, տրանսպորտ, կեցություն, ծրագրային ծախսեր, լող և այլն)	167 460 801
«Այբ» համայնքի միջոցառումների ծախսեր	452 988
Այլ նախագծերի ուղղակի ծախսեր	3 534 906

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	
Ներդրումային գործունեությունից ներհոսք՝ ներառյալ կապիտալ, շինարարության և վերանորոգման, հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով ստացված նպատակային նվիրատվություններ	-
Ներդրումային գործունեությունից արտահոսք՝ ներառյալ նոր շինարարություն և կապիտալ վերանորոգում, սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռքբերում	115 554 323
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ներհոսք՝ ներառյալ ներդրված ավանդներից տոկոսագումարներ և նախկինում տրամադրված փոխառությունների վերադարձ	10 465 958
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների արտահոսք՝ ներառյալ ստացված փոխառությունների մարում և փոխառությունների տրամադրում	11 380 574

Սկզբնական մնացորդ 2020 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ	102 252 189
Ընդամենը՝ ներհոսք	1 073 722 187
Ընդամենը՝ արտահոսք	1 080 594 278
Վերջնական մնացորդ 2021 թ. օգոստոսի 31-ի դրությամբ	95 380 098

ԿՈՐԹԱՐՈՒՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Այբ» դպրոցի ավագ բաղադրիչը ոչ պետական կրթության ոլորտում առաջին սոցիալական ծրագիրն է: Մենք մեր դպրոց ընդունված բոլոր աշակերտներին տալիս ենք «Այբ»-ում սովորելու հավասար հնարավորություններ. «Այբ» հիմնադրամը հայթայթում է ֆոնդեր անհատ բարերարների ու կազմակերպությունների նվիրատվություններից, որպեսզի որևէ աշակերտ, որ ընդունվել է «Այբ» ավագ դպրոց, չզրկվի այստեղ սովորելու հնարավորությունից ֆինանսական պատճառով: «Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի «Այբ» հիմնադրամից ստանում է ուսման վարձի մասնակի կամ ամբողջական փոխհատուցում՝ համաձայն ֆինանսական աջակցության տրամադրման սկզբունքների և նպատակների:

ԱՋԱԿՑԻՐ «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻՆ

«Այբ» դպրոցը շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որ ստեղծվել է աշխարհի տարբեր անկյուններում ապրող ու աշխատող մարդկանց նվիրաբերությունների շնորհիվ: Ավելի քան 200 անհատ միավորել են իրենց ջանքերը, գիտելիքները, ֆինանսական և ժամանակային ռեսուրսները, պատասխանատվությունն ու սերը հանուն հայկական կրթության զարգացման, հանուն սերնդակերտման բարդ և շնորհակալ գործի: Մենք ունենք քո օգնության կարիքը «Այբ» դպրոցի հետագա զարգացման ու ընդլայնման համար: Մենք արդեն հավաքել ենք բավարար միջոցներ դպրոցի մասնաշենքերի շինարարության և համալրման, լաբորատորիաների ստեղծման և ամենաժամանակակից ուսումնական նյութերի մշակման համար: Այս ամենի շնորհիվ այսօր ավելի քան 470 աշակերտ ուսանում է «Այբ» դպրոցում, հաղթում ու պատվով ներկայացնում Հայաստանը միջազգային օլիմպիադաներում, ուսումը շարունակում աշխարհի լավագույն բուհերում, փոփոխություններ բերող ծրագրեր իրականացնում արդեն այսօր:

ՄԻԱՑԻ՛Ր «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԻՆ, ԿԱՏԱՐԻ՛Ր ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀԻՄԱ, ԴԱՐՁՐՈ՛Ւ ԱՇԽԱՐՀՆ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ:

ԵԿԻՐՀԻՐ

$150

$600

$6000

$50,000

$100,000

ՆԿԻՐԱԲԵՐԻՀ

և երեխաները կունենան նոր նյութեր ու
սարքավորումներ գիտության իրենց դասերի համար

և հովանավորիր 1 տաղանդավոր
երեխայի 1 ամսվա ուսումն «Այբ» դպրոցում

և մեկ աշակերտ ամբողջ տարի
կսովորի «Այբ»-ում հենց քո շնորհիվ

և քո անունով կոչիր մեկ
լսարան «Այբ» դպրոցի նոր մասնաշենքում

և դարձիր «Այբ» կրթական
հանգույցի միջուկ-դրամագլխի բարերար

Եթե ունես «Այբ» դպրոցին աջակցելու այլ
առաջարկ, գրիր մեզ donation@ayb.am հասցեով

ՄԵՐ ԱՋԱԿԻՑՆԵՐԸ

Դժվար է գտնել երախտագիտության և հիացմունքի խոսքեր այն մարդկանց հանդեպ, որոնց շնորհիվ «Այբ» դպրոցն արդեն տասը տարի գոյություն ունի, զարգանում է և նոր ծրագրեր իրականացնում՝ մեր երկրի ապագան կրթությամբ վերափոխելու առաքելությամբ: Մեր բարերարների ու աջակիցների թիվն անցել է երկու հարյուրի սահմանը՝ երկու հարյուր վառ անհատականություն աշխարհի տարբեր երկրներից, երկու հարյուր գաղափարակից, ովքեր իրենց ժամանակն ու ֆինանսական ռեսուրսները ներդրել են ի շահ հայկական կրթության մրցունակության մեծացման, ի շահ ուսյալ ու առաքինի սերունդների կերտման: Երկու հարյուր մարդ հավատացել է «Այբ»-ի նպատակներին, երկու հարյուր մարդ կիսել է մեզ հետ մեր գործի հանդեպ նվիրումն ու սերը: Մեր ծրագրերի հաջողության հիմքը հենց այս անձանց արժեքների, փորձառության, հնարավորությունների, պատասխանատվության այն ընդհանուր հզոր ազդեցությունն է, որի շնորհիվ անգամ անիրատեսական թվացող նպատակները դառնում են շոշափելի:

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԵՎ ***ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ***

«Ազատ» հիմնադրամ
«Այբ» կրթական հիմնադրամ
«Այբ» համայնք
«Գյոթե» ինստիտուտ
«Զիգզագ» ՍՊԸ
«Կամոբլոգ» ՍՊԸ
«ՋիԷնՍի-Ալֆա» ՓԲԸ
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ
Անի Մաթևոսյան
Արա Աբրահամյան
Արամ Փախչանյան
Արաքսի Թումաջանյան
Արթուր Ալավերդյան
Արթուր Գրիգորյան
Արթուր Ջանիբեկյան
Արման Ջիլավյան
Արմեն Սաֆարյան
Արուսյակ Մկրտչյան
Արտակ Հովհաննիսյան
Արտավազդ Մինասյան
Գայանե Արամյան
Գայանե Վարդանյան
Դավիթ Գասպարյան
Դավիթ Յան
Դավիթ Սահակյան
Դավիթ Փախչանյան
Դիանա Այվազյան
Եվա Սողոյան
Էմմա Մովսեսյան
Էմմա Սարոյան
Թալին Սաղդասարյան
Թենի Մաթյան
Իվան Բլանկո
Կարեն Մուսաելյան
Լիլիթ Գևորգյան
Հակոբ Մոմջյան
Հայ առաքելական սուրբ եկեղեցի
ՀԲԸՄ
Հովհաննես Ազնաուրյան
Մանանա Թարփոշյան
Մարիան Վալկենաու
Մարինե Հովհաննիսյան
Մարտիրոս Մինասյան
Մերի Պետրոսյան
Նազարեթ և Նիլա Ֆըսթըգճյան
Նարեկ Խաչատրյան
Շարմաղ Սաքունց
Շուշանիկ Բասմաջյան
Ռուբեն Հարությունյան
Սարգիս Բադալյան
Սիլվա և Շի Յանգ
Սուրեն Մարաշլյան
Վազգեն Գաբրիելյան
Վահե Ամիրբեկյան
«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ
Վիկտոր Ակուլյան
Տաթևիկ Ավետիսյան
Տիգրան Հարությունյան
Ռաֆֆի և Նինա Ֆըսթըգճյան

FACEBOOK

TWITTER

INSTAGRAM

YOUTUBE

«Այբ» դպրոց
Թբիլիսյան խճ. 11/11
Երևան 0052,
Հայաստանի Հանրապետություն
094546498
096500456
welcome@aybschool.am
www.aybschool.am

Այբ
դպրոց